ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«------» ———————— 2024թ. N ____ Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևանի ավագանին որոշում է.

1. Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի կանոնակարգը ընդունելու մասին» N 1-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը.
   1) հավելվածի 75-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.
      «75. Ավագանու յուրաքանչյուր հերթական նիստին Ավագանու անդամի բանավոր հարցերին պատասխանում են Քաղաքապետը, Քաղաքապետի տեղակալները, վարչական շրջանների ղեկավարները և Քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները, բացառությամբ այն նիստերի, երբ Կանոնակարգի 76-րդ կետի համաձայն ավագանու հերթական նստաշրջանների մեկ նիստի ընթացքում հայտարարվում է մտքերի փոխանակություն և երբ քննարկվում է Երևան քաղաքի բյուջեի նախագիծը:»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Ազգային առաջընթաց»
խմբակցության անդամ **Հայկ Գրիգորյան**

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նշվում է, որ Երևան քաղաքի ավագանին ընդունում է իր կանոնակարգը:

Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի կանոնակարգը ընդունելու մասին» N 1-Ն որոշման հավելվածի 75-րդ կետը սահմանում է ավագանու հերթական նստաշրջաններին՝ երկու ամսվա մեջ մեկ նիստի ընթացքում, ավագանու անդամի բանավոր հարցերին պատասխանում են քաղաքապետը, քաղաքապետի տեղակալները, վարչական շրջանների ղեկավարները և քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները: Սակայն գործնականում դա հանգեցնում է մի այնպիսի իրավիճակի, երբ ավագանու անդամը ունենում է հարց՝ ուղղված վարչական շրջանների ղեկավարներին, սակայն նշված անձինք ներկա չեն լինում նիստին ու ստիպված պետք է կամ թղթային տարբերակով ուղարկել հարցում, կամ սպասել մինչև հաջորդ ամսվա մեջ կայացող ավագանու նիստին, որի դեպքում էլ տվյալ հարցը կորցնում է իր հրատապությունն ու արդիականությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք սույն փոփոխությունը, որը միտված է յուրաքանչյուր նիստին քաղաքապետի, քաղաքապետի տեղակալների, վարչական շրջանների ղեկավարների և քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների մասնակցությանը յուրաքանչյուր նիստին, հաշվետվողականությունը բարձրացնելուն, ինչը և կխթանի հանրության առջև առավել թափանցիկ ու պատասխանատու գործելուն:

«Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունումը Երևան քաղաքի բյուջեի եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի առաջացնում:

«Ազգային առաջընթաց»
խմբակցության անդամ **Հայկ Գրիգորյան**

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Հ/Հ	Առաջարկության, առարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Կատարված փոփոխությունները
1.	ՀՀ արդարադատության նախարարություն **N //16604-2024** **«29» ապրիլի 2024թ.**	1. Անդրադառնալով նախագծի հիմնավորմանը՝ հարկ ենք համարում նշել, որ նորմատիվ իրավական ակտի ընդունման հիմնավորման ճիշտ կառուցվածքը և բովանդակությունն ունեն առանցքային նշանակություն, հետևաբար իրավական ակտի հիմնավորման մեջ պետք է ներառել իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, ընթացիկ իրավիճակը և խնդիրները, տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը, կարգավորման նպատակը, բնույթը և ակնկալվող արդյունքը: Այնինչ, տվյալ դեպքում նախագծին կից ներկայացված հիմնավորումից հնարավոր չէ լիարժեք ձևով գնահատել ներկայացված նախագծի արդյունավետությունը, քանի որ բացակայում են տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականության, կարգավորման նպատակի, բնույթի և ակնկալվող արդյունքի համապատասխան խորը և համապարփակ վերլուծությունները, ինչն էական նշանակություն և կարևորություն ունի ներկայացված առաջարկությունների հիմնավորվածությունը լիարժեք ձևով գնահատելու համար: Ամփոփելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ ներկայիս կարգավորմամբ արդեն իսկ նախատեսվում է, որ Ավագանու հերթական նստաշրջաններին՝ ***երկու ամսվա մեջ մեկ նիստի ընթացքում***, Ավագանու անդամի բանավոր հարցերին պատասխանում են Քաղաքապետը, Քաղաքապետի տեղակալները, վարչական շրջանների ղեկավարները և Քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է լրացուցիչ հիմնավորել	1. Ընդունվել է: Տեղեկանք-հիմնավորումը լրամշակվել է:

		ավագանու յուրաքանչյուր հերթական նիստին ավագանու անդամի բանավոր հարցերին Քաղաքապետի, Քաղաքապետի տեղակալների, վարչական շրջանների ղեկավարների և Քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների պատասխանելու վերաբերյալ կարգավորման ներդրման անհրաժեշտությունը:	

«Ազգային առաջընթաց»
խմբակցության անդամ **Հայկ Գրիգորյան**